Եղեգ

Բնակչություն՝ 102

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 27 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1300 մ,
Կարգավիճակը՝ սահմանամերձ,

Եղեգ գյուղը Եղեգն ձևով հիշատակվում է Ստ. Օրբելյանի «Պատմություն վասն Սիսական» աշխատության մեջ: Ըստ հիշատակությունների, եղել է գրչության կենտրոն և հին հարկացուցակի համաձայն Տաթևի վանքին տվել է 12 միավոր հարկ: 19-րդ դարում հայաթափվել է:
Գյուղի տարածքում կան երկու 17-18դդ. եկեղեցի, գերեզմանոց, իսկ գյուղից 1 կմ հյուսիս՝ հին գյուղատեղի:

1988-89թթ. գյուղը կրկին վերաբնակեցվել է հայերով: Եղեգի գյուղական խորհուրդը ձևավորվել է 1991թ.՝ տարանջատվելով Սևաքարի գյուղխորհրդից:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 1631 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 752 հա, որից՝
- վարելահող՝ 53 հա, բազմամյա տնկարկ՝ 3 հա, խոտհարք՝ 42 հա, արոտ՝ 160 հա, այլ հողատեսք՝494հա
- բնակավայրերի հողեր՝ 22 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 1 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝1 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 61 հա,
- անտառային հողեր՝ 790 հա, որից անտառածածկ՝ 768 հա
- ջրային հողեր՝ 4 հա